ԱԼԱՎԵՐԴՈՒ ԹԻՎ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«Վերածնունդ»

Պարի խմբակի ծրագիր

2022-2023 ուս. տարի

Պարուսույց՝ Լեյլի Հովհաննիսյան

/շաբաթական՝ 2 ժ., տարեկան՝ 68 ժ./

Բացատրագիր

Խմբակի ծրագիրը նեկայացված է աղյուսակի տեքով:

Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. **Թեմայի անունը, ժամաքանակը**
2. **Նպատակները**
3. **Խնդիրները**
4. **Վերջնարդյունքները**
5. **Բովանդակությունը**

Ծրագրում ներկայացված են պարեր, որոնք նախատեսված են համադպրոցական միջոցառումներ իրականացնելու, աշակերտների ընդհանուր զարգացման և գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, պարային, երաժշտական և ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացման վրա:

Խմբակի ծրագիրը նախատեսված է տարրական և միջին դպրոցի տարիքային խմբի աշակերտների համար:

ԾՐԱԳԻՐ

Հայկական հայրենասիրական և ազգագրական պարեր 34 ժամ
Նպատակը
Ծանոթացնել աշակերտներին պարային այն շարժումների հետ, որոնք լցված են հայրենասիրական ոգով, կատարել բեմադրական աշխատանք և ստեղծել պարային կատարում:
Խնդիր
Հայրենասիրական պարերի օգնությամբ աշակերտների մոտ ավելի ամրացնել սերը հայրենիքի նկատմամբ:
Վերջնարդյունք
Աշակերտները մի քանի տարբեր պարերով կկարողանան արտահայտել իրենց հայրենասիրությունը և ճանաչել ազգային պարերի իմաստն ու նշանակությունը:
1. «ՔՈՉԱՐԻ»-8 ժ. 2. «ԱՐՏԱՇԱՏ»-6 ժ. 3. «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ»-8 ժ. 4. «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԻ ՇԱՐԱՆ»-6 ժ. 5. «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ»-6 ժ.
Հայկական բեմադրական պարեր 34 ժամ
Նպատակ
Ծանոթացնել աշակերտների բեմադրական արվեստի հետ, տերմինաբանությանը, շարժումների միացման նրբություններին և մտքի արտահայտումը պարի միջոցով: Ծանոթանալ բեմական շարժումներին:
Խնդիր
Աշակերտները տեղեկացված կլինեն պարային շարժումների տերմիններին, կկարողանան ստեղծագործել ինքնուրույն և բեմադրական պարերվ արտահայտել իրենց միտքը:
Վերջնարդյունք

Կներկայացնեն մի քանի բեմադրական պար, դրանց իմաստը և նշանակությունը:
1. **«ԱՐՑԱԽ»**-8 ժ. 2. **«ՎԵՐՎԵՐԻ»**-6 ժ. 3. **«ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԵՐ»**-8ժ. 4. **«ՔԵՐԾԻ»**-6 ժ.